ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Արտասահմանի համար տարեկան 5 Ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. Թղթդրմ. Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 Ֆր., վեցամսեայն 10 Ֆրանգ և եռամսեայն 5 Ֆրանգ։

Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ը ՏԱՐԻ ԹԻԻ 16

1892 ՀՈԿՏԵՄԲԵՐ 12

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 (Հ. Տ.)

ՁՈՐԵԳԱՁԱԹԹ

Կը հրատարակուի Ի. և ԺԵ. օրեր

ՊԱՏՄԱԶՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցմներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուներով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մացուներու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք առնուլ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և ուրիշ գառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իր նպատակ իրագործելու համար իր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին այժ գոյացնել Ազգին մէջ իր աղատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի աղատութեան դործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիրը որ, բացի ազգային լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցի կամ թղթակցի ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակէ Ամերիկա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրենասիրութիւն եւ սօսիալիստները. — Վեհափառ Հայրիկ. — Ռափայէլ Պատկանեանը Բազուռում. — Հարստահարութիւններ եւ քաղաքական հալածանք Վանի մէջ. — Մուսա պէյի մրցակից մը. — Պուլկարիոյ հայ վարժարանները. — Ամերիկայի Հայերի պատուիրակը. — Տեղական. — Մեզ գրուղներին. — Ֆօլքլոր Պարտկատանի մէջ. — Ծանուցումներ. — Բանասիրական (Հայերը Աստրօ-Ունգարիայում)։

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՕՍԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Ամերիկայի սօսիալիստներէն պետ Պր. Լէյպնախթ Մարսէյլի ընկերվարական Համաժողովին մէջ խօսած ճառով հայրենասիրական և ազգասիրական զգացումները բացէ ի բաց հարուածել ուզած էր. «Մեզ, սօսիալիստներիս համար, ազգութեան խնդիրը չկայ, ըսած էր. մեզ համար միայն երկու տարբեր ազգեր կան, մին դրամատէրներուն ազգը և միւսը բոլոր աշխարհներէն գործաւոր դասակարգը»։

Այդ ճառի առթիվ ֆրանսական մամուլը սկսեր է յարձակիլ Պր. Լէյպնախթի վրայ և քննադատել իր երկդիմի ընթացք, երեսին տալով իրեն՝ ամերիկական խորհրդարանի և ամերիկան միլիոնկներուն մէջ իր խօսած ճառերը որոնք բոլորովին տարբեր միտք ունին։

Ֆրանսական թերթերը ամերիկեան սօսիալիստներուն այդ և ուրիշ գործառնութիւնները Ամերիկայի մէջ խօսած ճառերէն այլ և այլ հատուածներ մէջ կը բերեն ապացուցանելու համար որ մինչդեռ այդ ամեն սօսիալիստներ կուգան Ֆրանսացիներէն ընդհանուր մարդկութեան գաղափարներ քարոզել, ազգութեան, հայրենիքի գաղափարները ծաղրել և տկարացնել, ընդհակառակն իրենց երկրի մէջ, Ամերիկացիներուն խօսած ատեն, հայրենասիրական զգացումներով կը խօսին և ուրիշ ազգերի դէմ առելութեան, կռուի զգացումներ կը բորբոքեն։

Ահա նոյն իսկ Լէյպնախթի իրեն խօսքեր զոր Ամերիկայի մէջ խօսած է.

«Ոչ ոք, որչափ ալ ոգեւորուած լինի մէկը միջազգայնութեան գաղափարներով, պիտի կրնայ ըսել թէ մենք պարտքեր չունինք դէպի ազգութիւնը։»

«Կըսուի թէ ամերիկան խորհրդարանը ֆրանսական խորհրդարանին չափ չմտածեր հայրենիքի պաշտպանութեան մասին։ Սակայն ես կը յայտարարեմ թէ երբ խնդիրը հայրենիքի վրայ է, ամեն կուսակցութիւններն ալ միացած իրը մէկ մարմին կը գործեն արտաքին թշնամւոն դէմ. ոչ մէկ կուսակցութիւն չպիտի ես միայ այդ ասպարէզի մէջ։»

Իր պաշտօնակից ուրիշ մը սօսիալիստ երեսփոխան վօլմար՝ Էրֆիւրտի համաժողովին մէջ ամերիկացի սօսիալիստներին հետեւեալը խօսած է. «Եթէ երբէք արտաքին մէջ այնպէս կարծօղներ կան թէ պատերազմի ժամանակ իրենք կրնան մեր վրայ յոյս դնել, չարաչար կը սխալին։ Ան վայրկենին երբ մեր հայրենիք յարձակում կրէ, այլ եւս կուսակցութիւնները մէկ կը լինին և մենք սօսիալիստ-դեմոկրատներս մեր պարտք կատարելու մտքին ոչ մէկէ ես պիտի մնանք։»

Այսպէս տակաւին ուրիշ շատ քաղաքներ, որոնցմէ կը տեսնուի թէ ամերիկացի սօսիալիստ վարպետները որ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՑԵՐԸ ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՑՈՒՄ

Ա.

ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. 15րդ թուհն)

ԼԷՕՊՕԼՍԻ ՎԻՃԱԿ

Լէմբէրգում 110,000 բնակիչ կայ, որոնց 20,000ից աւելին Հրէայ է։ Հայոց ընդհանուր թիւն է այստեղ 180 հոգի։

Լէմբէրգի կաթոլիկ Հայոց եկեղեցին կոչվում է «Հայոց archicathedrale (գլխաւոր մայր) եկեղեցի»։ Աւանդութեան համեմատ Նոյի գաղթականներն երբ եկել են Լեհաստանի այս բաժինն, իրանց համար Լէմբէրգում մի փայտաշէն եկեղեցի են կառուցել 1183ին։ Մօտ երկու դար յետոյ, այսինքն 1363ին՝ նոյն եկեղեցին քանդելով, գաղթականները քարաշէն եկեղեցի են կառուցել։ 1823ին տեղական Հայոց դատաւոր հայազգի Ֆըրիստափոր Աղուստինովիչի ծախքով ապագ խորանի և այլ քանի մի մասերի և վերջապէս 1860ին էլ հանգանակութեամբ ընդհանուր նորոգութիւն է կատարված։ Եկեղեցին նուիրված է «Վերափոխման Ս. Աստուածածնայ», որով էլ նա կոչվում է այժմ։

Եկեղեցին ունի մի մեծաւոր՝ (Paro-

chus), Տ. Կայեդանոս Կայեդանովիչ։ Ընդանիքս զատ Լէմբէրգում կան 5 վարդապետներ, Տ. Տ. Դաւիդովիչ, Մովսէսովիչ, Բողդանովիչ, Շահէնդել և Վոյդագ։ Այս վերջին երկուսը օտարազգիք են, և լատին ծէսը թողած ընդունել են հայ ծէսն և հայ արքեպիսկոպոսի իրաւասութիւնը։ Լէմբէրգի մօտ վանական գիւղում կայ նաեւ մի մատուռ, ուր տարին 3 անգամ միայն, մեծ տօներին, պատարագ է մատուցվում։

Լէմբէրգում կայ հայ կուսանոց, որին կից պահվում է մի կանոնաւոր աղջկանց վարժարան, գանձատուն կարօտեալ Հայոց համար և հայ որբանոց, բայց սրանց վրայ կը խօսինք երկրորդ յօդուածում։

Լեհաստանի Հայերն իրենց համար յատուկ կղերանոց չունեն այժմ և իրանց կղերացուները դաստիարակութիւն են ստանում Լէմբէրգի լատինական կղերանոցում, որտեղ հայ աշակերտների ծախքը հոգացվում է հայ նուիրատուների կողմից այս նպատակի համար յատկացրած գումարից։ Ներկայումս այդտեղ ուսանում են 4 Հայեր, բարձրագոյն դասի ուսանողք, որ են Պետրօվիչ, Պօղոսովիչ, Մարամօրօչ և Բրքովսկի։

Հայածէս քահանայից ձեռնադրութիւնը կատարում է հայ Թեմական եպիսկոպոսը։

գութիւնը։»

«Կըսուի թէ ամերիկան խորհրդարանը ֆրանսական խորհրդարանին չափ չմտածեր հայրենիքի պաշտպանութեան մասին։ Սակայն ես կը յայտարարեմ թէ երբ խնդիրը հայրենիքի վրայ է, ամեն կուսակցութիւններն ալ միացած իրը մէկ մարմին կը գործեն արտաքին թշնամւոն դէմ. ոչ մէկ կուսակցութիւն չպիտի ես միայ այդ ասպարէզի մէջ։»

Իր պաշտօնակից ուրիշ մը սօսիալիստ երեսփոխան վօլմար՝ Էրֆիւրտի համաժողովին մէջ ամերիկացի սօսիալիստներին հետեւեալը խօսած է. «Եթէ երբէք արտաքին մէջ այնպէս կարծօղներ կան թէ պատերազմի ժամանակ իրենք կրնան մեր վրայ յոյս դնել, չարաչար կը սխալին։ Ան վայրկենին երբ մեր հայրենիք յարձակում կրէ, այլ եւս կուսակցութիւնները մէկ կը լինին և մենք սօսիալիստ-դեմոկրատներս մեր պարտք կատարելու մտքին ոչ մէկէ ես պիտի մնանք։»

Այսպէս տակաւին ուրիշ շատ քաղաքներ, որոնցմէ կը տեսնուի թէ ամերիկացի սօսիալիստ վարպետները որ-

2. ՍՏԱՆԻՍԼԱՒՕՊՕԼԻ ՎԻՃԱԿ

Վիճակի առաջնորդ նստում է Ստանիսլաւօպօլում և է այժմ Տ. Միքայէլ Բօմաշկան։

Այս վիճակի մէջ կան 4 հայաբնակ քաղաք, որոնք են Ստանիսլաւօպօլ, Տիսմենիցա, Բրժեժանի (Brzézany) և Լիսիչ (Lysiec)։

ՍՏԱՆԻՍԼԱՒՕՊՕԼ

Հայ կաթոլիկներն 1663ին ունէին արդէն այստեղ իրանց ժողովրդապետութիւնն և մի փայտաշէն եկեղեցի, որը հիմնած է հայազգի Անդրէաս Պօտոկի, Կրակովի քաղաքապետը. 1744ին նրա որդին սկսաւ կառուցանել մի քարաշէն եկեղեցի. որ վերջացած է 1752ին։ Նորոգված է նախ 1830ին, ապա 1854ին։ 1868ին մի սոսկալի հրդեհ ամբողջ քաղաքի մէջ մեծ կոտորածներ է կատարած, որից անվնաս չէ մնացած նաեւ Հայոց եկեղեցին. ուստի և հետեւեալ տարին՝ 1869 թ. եկեղեցին գրեթէ վերականգնված է և որ մնում է մինչեւ այժմ։ Եկեղեցուն կից կայ և մի եկեղեցական չինութիւն, ուր բնակվում է տեղւոյն ժողովրդապետը (Curé)։ Եկեղեցու տիտղոսն է՝ «Անարատ յղութեան Ս. Աստուածածնայ»։

Վիճակի առաջնորդ Բօմաշկան վարդապետն է միանգամայն եկեղեցու մե-

ԵՐԳԵՐ

Ա յսոլ հայ երգիչ մի հիշէ՝ 1764 ք. հայ հասարակութիւն ձայնով, 1838ին թղթ հրց 1810ին մէկիկ, «Աչեարտ յղեալ» ձեռք դաշնակ մը ունէր, որ երգեր եւ վերջ ինքն կ՚երգէր, ինքնագիր հատորներ ի ձեռին, որոնց մէջ (VIIIa) համարը իրը ցոյց կ՚երգէր հին մը տեսակ մը եղած է, որ երբեմն կատարելապէս երգուելու համար։

Ընդհանուր 240 համարներ հայ ու հին կ՚երգուէին ազգային հանդէսներու մէջ։

Ցանկը թողլով՝ կ՚անցնինք երգերուն ձայնին։

Երգերը ամենքն ալ տնտեսական չափով 4 ձայնով։

Առաջին երգը հայ երգարուեստին մէջ 175 տարի առաջ գրուած է։ Մեր հին երգերուն մէջ ամենքն ալ ունին մեծ ոճ մը, որ կը պատկանի հայ ժողովուրդին։ Ինչպէս հայ ազգային տարազը, հայ ճարտարապետութիւնը, հայ ձեռագրերը, հայ նկարչութիւնը, հայ ոսկերչութիւնը, հայ գորգերը, հայ ասեղնագործութիւնը, հայ ժողովրդական պարերը, հայ ժողովրդական երգերն ալ ունին իրենց ոճը, որ կը տարբերի միւս ազգերու ոճերէն։

Ոճը ինչ է, կարելի չէ բացատրել, բայց ամէն մարդ կրնայ զգալ։

Ոճը կը կազմուի ազգին ամբողջ կեանքէն, անոր ամբողջ պատմութենէն, անոր ամբողջ հոգեբանութենէն, անոր ամբողջ ընկերական կազմակերպութենէն, անոր ամբողջ բնութենէն, անոր ամբողջ ապրելակերպէն, անոր ամբողջ ճաշակէն, անոր ամբողջ ձգտումներէն, անոր ամբողջ ոգիէն

տեղը տեղից վեր կացաւ, կանգնեց չառազանուած, այլայլուած խօսեց այսպէս. «Շատ և այնչափ դոհ եմ, Բազուկենե՛ր, ձեղանից, ձեր ինձ ա-բած այս մեծ պատուի համար, որին հազիւ թէ ես արժան լինեմ. բայց թոյլ ներուի ինձ ձեզ մի երկու խօսք ասել նաեւ»: Բոլորը խորին ուշադրութեամբ լսում էին նրան. Նա շարունակեց. «Ա՛յս ամենը շատ լաւ են: Ուրախալի է որ Հայերը ամեն տեղեր մեծ ձիրքեր են ցոյց տալիս վաճառականութեան մէջ. հարստութիւններ են դիզում, որից ի հարկէ ներկայ ժամանակներում մեծ կարեւորութիւն ունի մարդս հասարակական և անհատական տպարէզներում: Բայց դուք բազդաբար Հայերի ձեռքը հասած այդ հարստութիւնները երկար չեն տեւում և ուրեմն ցանկալի նպատակին չեն հասնում: Հնդկաստանի կալկաթա քաղաքի, Նոր Ջուղայի գաղթավայրերը մեզ ցաւալի եղրակացութեան են բերում: Պիտի խոստովանիլ, որ կալկաթայի մեր Հայերի հարստութիւնը անհամեմատելի մեծ էր քան Բազուցիներին. այդպէս էր նաեւ Ջուղայեցիներինը: Բայց ի՞նչ եղան այդ ահագին միլիոնները, ո՞ւր կորաւ, տանելով իր հետ նաեւ բազմաթիւ դպրոցականներին: Կորան միլիոնները, կորաւ դժբազդաբար նաեւ այն փառաւոր դպրոցականութիւնը, որոնց մէջ կային նաեւ այնպիսի անհատներ, որոնք իրենց ոսկիներով ամբողջ կովկասը կարող էին գնել: Կորա՜ծ, այդ և իսպառ գլորեց իր հետը գաղթականն Հայոց: Դորանից մնաց միայն Մոսկուայի Լազարեանց ճեմարանը, որը ամենաչնչին մի մասն էր մեծանուն հիմնադրի հարստութեան: Հիմա տեսնում էք, որ այն ահագին հարստութիւններից այսօր ոչնչ չմնաց. բայց ճեմարանը մնացել է և դեռ երկար կը մնայ: Ուրեմն մարդիկ անցաւոր են, անցաւոր են նաեւ հարստութիւնները, բայց բարի գործերը մնայնական են: Գաղութիւնը պիտի լաւ ըմբռնել և աշխատել կորստաբեր սխալանքներից խոյս տալու: Թէ ի՞նչ է հարկաւոր ձեզ անելու, հարո՛ստ Բազուցիներ, ես չեմ ասել այդ, ինքներդ գտեցէք: Դուք լաւ էք հասկանում թէ հայութիւնը ի՞նչ դրութեան մէջ է ներկայումս. թէ դեպի ձեզ ի՞նչ ձգտումներ ունեն նրանք, ես ձեզ չեմ կարող ասել: Հետաքրքրվեցէք և դուք կարող էք հասկանալ ի՞նչ է մնում ձեզ անելու: Թշուառ Հայու դրութիւնը օրէ ցօր վատթար կերպարանք է առնում: Նրա երազած ցնորքները մի լուսաւոր ապագայի համար, աւա՛ղ, օդն են ցնդվում: Նրա սրբազան լոզէների չարագուշակների լեզուներով օրից օր լցնվում են պիղծ Տաճկի խեղդող, հիւծող բառերը: Էլ ո՞ր օրին էք սպասում, Բազուցինե՛ր»: Քիչ ժամանակ դադար առնելուց յետոյ, շարունակեց. «Ինձ երեւոյթս այս եղանակով մեծարելու կարիք չկայ. իսկ եթէ Բազուցիք ցանկանում են ինձ պատուած մեծարած լինել, ապա լաւ կանչին եթէ իրենց վրա ընկած պարտքը կատարէին:

Ում շատ է տրուած, նրանից շատ է պահանջվում: Ա.յոտով 5-6 բազիից (կերակրեղէնի տեսակներից) կերակուրներ թափած ու բազմաթիւ լըմիչքներով գինեցած, Թրխմեան Հայրիկի, Հայաստանի ազատութեան կենացները, այդ շատ հնչին բաներ են, Բազուցինե՛ր: Ձիշեցէ՛ք, դուք Բազուցինե՛ր, ի՞նչ դրութեան մէջ են այս րոպէիս ձեր արհեստակից, ձեր Թիւրքահայ եղբայրները: Դուք չը պիտի մոռանաք, որ գաղթել էք, լաւ վճռակի հասնելուց յետոյ վերադառնալ խոստանալով ձեր հայրենիքը. չպիտի ապերախտ դանվել դէպի ձեր հայրենեաց սրբութիւնները: Ա.յո՛, երբ Գերմանացին կը խմէ, նա կը պարէ, Ռուսը՝ լաց կը լինի, իսկ Հայը Հայաստանցիների կամ հայ գործիչների կենացը կը խմէ: Տա՛յ Աստած, որ ձեր ողեւորութիւնը երկար ժամանակները տեւէ, ոչ միայն սեղանների վրա»:

Դամառ Բաթիպաի այս ապտակը ուրախ սեղանակիցների արամադրութիւնը փոխեց և բոլորն էլ զգային ծանր ժամանակի խնամաբ. Բայց ի՞նչքան ժամանակ հարուստ Բազուցինեը տևրեցին: Միայն այդ օրը: Հետեւեալ օրերը, էլի գործերը իրենց առաջուայ սովորական ընթացքը մըտան: Ա.յժմ գոնէ յիշեն հարուստ Հայերը իրենց մեծ քարոզչի տուած խոստումնքները:

ՍԱՐ-ԹԱԳ

1892 հոկտ. 3 Միւնիխ

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔ ՎԱՆԻ ՄԷՋ

(Շար. 15րդ թուհն եւ վերջ)

— Ջրի խնդրոյ մը պատճառաւ ոստիկան մը Հայկավանք թաղի Հայերին հետ վէճ կունենայ և անոնցմէ մէկը կը վիրաւորէ. բայց լնք անոնցմէ շուտ կը հասնի կը բողոքէ ոստիկանութեան և Հայկավանքցիները կը խմբովին կը բանտարկուին:

— Ա.ւանց նաւահանգստին մէջ թիւրք ձիապանները ամեն բանութիւն ի գործ կը դնեն և չեն թողուր որ հայ վաճառականը իր բեռները առնի առանց վարձքով ուրիշ ձիապանի տայ. բեռները իրենք կը յափշտակեն և իրենց ուզած վարձքով կը փոխադրեն:

— Հին հայ պաշտօնեաները բոլոր պաշտօնանկ եղած են. ազգէն յաղորդած են այնպիսի Հայեր որոնք նոր նոր լրտեսութիւններով և զրպարտութիւններով աւելի գործունեայ ցուցած են ինքզինքնին:

— Քիւրդ հեծելազօրք իրենց ձիերի թիւը ամբողջացնելու համար հայ գիւղերի նախիրներէն ձիեր քաշած տարած են:

—Ազգային վարչութիւն. Պատրիարքարանի Յովհէի վարդապետ Ա.յվազեան ալ իր ճիզուիթական դիմակ վար առնելով, սկսած է բացէ ի բաց հզօր կոմիտէին աւելի չորզբորթել և ակարները ոտնակոխ անել. իրեն հակառակորդ երեսփոխանների ցանկը կատակալին հաղորդած է իբր վտանգաւոր մարդիկ և այդ կերպով կաշխատի զանոնք կառավարական ճընշմամբ հեռացնել առաջնորդարանէ: Ա.ստիկէօղալ գիւղի քահանան որ ոստիկաններէ ծեծուեր ու հայհոյուեր էր, իրեն դիմած լինելով, հետեւեալ պատասխանն ընդուներ է. «Հայհոյուիլը ձեզ ոչ չունի, ես ալ միշտ կը հայհոյուիմ. իսկ ծեծի համար ինքդ գնա կատակալին բողոքէ»: Խեղճ քահանան առանց առաջնորդի պաշտպանութեան ի՞նչպէս կրնայ կատակալին երեսը ելնել. քանի որ ան խիստ բարկացոտ, աննման հայհոյիչ և շատ հայատեաց մի մարդ է:

— Ցակաւին բանտի մէջ կը մնան Սղղայեցի գիւղացիները, Քանքանեան փանոս. Լէղքցիներէն երեք հոգին ալ երեքական տարի շղթայակապ բանտարկութեան կը դատապարտուին զօրքերի դէմ իրենց ընտանիքների պաշտպանելու յանցանքին համար: Նախկին դատապարտեալներին կարապետ Նաթանեանի և ընկերներին միջոց իսկ չէ տրուած կ. Պոլիս բողոքելու:

(Բաղդատեցէք վանի նահանգներէ)

ՄՈՒՍԱ ՊԷՅԻ ՄՐՑԱԿԻՑ ՄԸ

Կ. Պոլսէն սեպտ. 27 թուով կը գրեն Սեւաթիոյին հետեւեալը.

«Յայտնի է թէ վատանուն Մուսա պէյ իր անօրինակ եղեռնագործութիւններուն ի պատիժ Մէքքէ աքսորուած է, այնտեղ հանդիստ կերպով բարեպաշտութիւն անելու համար: Ա.յժմ իրեն ուխտակից ըրկուած է մի դեռահաս եղեռնագործ ալ, Ալպանիայի Ֆախրէտտին պէյ, որ բազմաթիւ դողութիւններ, բռնաբարութիւններ և սպանութիւններ գործած է: Երկար տաւնէ ի վեր թիւրք ոստիկաններն ադոր առջեւէն փախուստ կուտային որովհետեւ դա Սուլթանին պալատին մէջ ծառայող մի հարուստ աղան, Սատտուլլահ պէյի տղան է: Թիւրքերը այս անգամ ալ պիտի չը ձերբակալեին զինքը եթէ այս դեռ 20 տարու հասակ ունեցող անպիտանը Ա.սարիայի մի հպատակի ալ մահուան սպառնալիք չտար: Ա.յս դէպքի վրայ միայն հրաման եղաւ զինք ձերբակալելու որովհետեւ ատարբական դեսպանը ճնշում գործադրեց: Սակայն և այնպէս ոստիկանները ձեռքերնին ձեռնոց անցուցած (պահպանքով) ճամբան իրեն՝ բռնելու համար և հոս ալ բերելէ ետք լոկ թեթեւ մի տանդիմանութիւն տրուեցաւ իրեն: Ա.յժմ Մէքքէ ղրկած են ուրկէ հաւանօրէն շուտով կը վերադառնայ:»

ՊՈՒԼԿԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Մեր ընթերցողների յայտնի է որ պուլկար կառավարութիւնը անցած տարի Սոպրանիէի քուէարկած մեկ օրէնքին վրայ հնդով, իմացուցած էր որ Պուլկարիայի հայ նախակրթարանները վեց տարու դասընթաց պիտի ունենան և առաջին 3 տարիներին մէջ պուլկար լեզուն պէտք է սովրեցունել և ամեն ուսումներն ալ պուլկար լեզուով աւանդել. իսկ հայ լեզուն դասախօսել վերջին 3 տարիներին մէջ միայն:

Նոյն անօրէնութիւն հաղորդուած էր նաեւ յոյն վարժարաններուն որէ հետեւանքն այն եղած էր որ Յոյները լատադոյն համարած էին փակել իրենց ազգային վարժարանները քան թէ համակերպիլ պուլկար կառավարութեան այդ կարգադրութեան: Միեւնոյն ժամանակ հեղլեն կառավարութիւնը յիշեցունելով Պուլկարիայի իր անկախութիւն ձեռք բերած ժամանակ մէջ ազգային հատանութեամբ խմբագրըւած իր կազմական օրէնքներէ այն տրամադրութիւն որով Պուլկարիա գտնուղ ամեն հատարակութիւններին արդէն օսմանեան իշխանութեան օրով վայելած եկեղեցական, կրթական և լեզուական իրաւունքները պիտի յարգուին, ծանուցագիր ղրկած և բողոքած էր Պուլկարիայի կրթական նախարարի այդ կարգադրութեան դէմ, թէ՛ Պուլկարիայի գերիշխան վեհապետ Սուլթանին և թէ՛ եւրոպական մեծ պետութիւններին:

Ա.մէնիայի նախորդ թուով խմացուցած էինք որ կ. Պոլսի հայ Պատրիարքարանն ալ Պուլկարիայի հայ վարժարանների խնդիրը ուշադրութեան առնելով, հարկ եղած դիմումներն արած է Սուլթանի կառավարութեան, իբրեւ Պուլկարիայի գերիշխան պետութեան:

Ա.յժմ գոհութեամբ կը տեղեկանանք որ պուլկար կառավարութիւնը Սոֆիայի լրագիրներուն մէջ պաշտօնապէս յայտարարած է թէ Հայերի և Յոյների վարժարանին մէջ դասախօսութիւնները՝ ինչպէս յառաջ նոյնպէս և այժմ, պիտի շարունակուին իրենց ազգային լեզուով և թէ փակուած վարժարանների վերաբացուիլը արտօնուած է:

Սոֆիայի կիսապաշտօնական Սմոպոտա լրագիրը կը յայտարարէ թէ պուլկար կառավարութիւնը կրթական նոր օրէնքը գործադրելէ հրաժարած է օսմանեան կառավարութեան կամքը յարգած լինելու համար միայն որ այս խնդրի միջամտած էր:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Ա.մերիկայի հայ գաղթականութեան կողմէն Պարսկաստանի վեհ. Շահին մօտ պատուիրակ ղրկուած Մեծ. Տիար Ց. Սարրաֆեան որ Պարսկաստանէն կը վերադառնայ այժմ, անցած շաբաթ օր հասաւ Մարսէյլ: Մի քանի օր այստեղ մնալով կը մեկնի վաղը Անգլիայի ճանապարհով դէպի Ամերիկա ուր եռանդագին կապասին իրեն:

ՏԵՂԱԿԱՆ

Մարսէյլ գտնուող հայ պանդուխտներէ մին, Մովսէս Ղազարոսեան Խաչիեան, Մուշի Առինջվանք գիւղէն, որ Յունաստանի կալամնքին քաղաքէն այստեղ եկած էր Ամերիկա երթալու համար, կասկածելի վարուժամբութեան բռնուելով երկու օր առաջ մեռաւ Մարսէյլի հիւանդանոցին մէջ:

Հայ պանդուխտը 48 տարեկան էր. հիւանդութիւնը շատ կարճ ջղեց: Ա.յս կիրակի ցերեկին թեթեւ անհանգստութիւն ղգացեր և քիչ բան կերեր

ֆը. Նոյն գիշեր ծարաւ ղգալով ջուր խմեր էը որի վրայ վիճակը ծաներա-ցեր և առաւօտեան կողմ մարեր ընկեր էր։

Ա.յստեղ հայ գաղթականները ըսկսած են իրենց մաքրութեան հոգ տանիլ. խեղճ և կեղտոտ ապրող գաղթականները հաւանօրէն ոստիկանութեան կողմէ խստութիւնների և թեբեւս քաղաքէն արտաքսման ալ դատապարտուին։

— Մարսէյլի կառավարութիւնը որոշեր է առայժմ բնաւ չթողուլ որ գաղթականները գան Մարսէյլ ո՛ը եր-կրէն ալ որ լինին։ Ուստի այլ եւս թող չպիտի տրուի որ Մարսէյլ եկնեն ո՛չ Սերբացիները, ո՛չ Ռուսիոի Հրէայները և ո՛չ իսկ Իտալացիները, ա-տանք թէ՛ Ամերիկա երթացող լինին և թէ՛ Ամերիկաէն վերադարձող լինին։ Հայ և ուրիշ արեւելցի գաղթականները ալ բնականապէս առայժմ պիտի չկրնան գալ Մարսէյլ։

ՄԵԶ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Թէհրանէն Արմենիոի ճակատը «Պայմանները»ին մէջ գրուած է թէ խմբագրութիւնը պարտաւոր չէ վերադարձնել անկ չհրատարակուած ձեռագիրները, բայց կը պատահի դարձեալ որ երբեմն յօդուածները կը ղրկեն մեզ խնդրելով որ եթէ ինչ ինչ պատճառներով արժան չհամարինք հրատարակել, ապահովապրիով վերադարձնենք իրենց։

Կը յիշեցունենք որ խմբագրական ընդհանուր օրէնք է այս, այնպէս որ թէ՛ հայ և թէ՛ եւրոպական լրագիրները սովորութիւն չունին իրենց ղրկուած ձեռագրները փոստով վերադարձնելու եթէ չհրատարակուին։ Արմենիան չկրնար բացառութիւն կազմել այդ ընդհանուր օրէնքէն որ խմբագիրների փորձառութեան արդիւնքն եղած է։

ԲՕԼՔԻԱՆ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրանէն օգոստ. 31/12 սեպտ. թուով կը հաղորդեն մեզ հետեւեալը. «Աւելորդ չեմ համարում հաղորդել ձեզ հետեւեալ մի քանի թուանշանները. քօլէրան դրեթէ 50 օր է որ տեղս երեւացեր է մեծ չարդ տալով. զոհ դնացողների թիւը միայն Թէհրանի միջից 22,000 է կարծւում. Հայերի տուած զոհերի թիւը 60ի է հասնում, Եւրոպացիներին 20, իսկ Հրէայներին 500։ Թէհրանի շրջակայքի գիւղօրայքից և գիւղաքաղաքներից (ուր փախած էին տեղիս բնակչաց կէսն) հասած լուր չկայ թէ ո՛րքան են մեռել. դեռ բոլորովին չեն վերադարձած։ Ա.յժմ օրէն 30-40 զոհ է դնում միայն, ուստի և բաղդատած օգոստոս 8-15ի օրերի հետ երբ օրական 7-800 մարդ զոհ էր գնում, այժմ կարելի է վերջացած համարել համաճարակը։»

— Սալմաստից սեպտ. 6/18 թուով կը գրեն հետեւեալը. «Քօլէրան ասա էլ բաւական կոտորածներ արեց մուսուլման և կաթոլիկ ժողովրդի մէջ. Հայք այնչափ նշանաւոր զոհեր չտուեցին և յայս կայ որ այսուհետեւ էլ չտան դի թէ՛ լսում են բժշկաց խորհրդին և թէ՛ զգուշանում են։ Թոյլ և Որմի գաւառներում էլ բաւական կոտորածներ է անում։ Խոյում համեմատաբար շատ Հայեր են մեռած։ Մարդայում մինչեւ այսօր 3,000 մուսուլմաններ և մի քանի հատ Հայեր են մեռել։ Թուրք կառավարութիւնը Սալմաստի սահմանագլխում կարանթինա է դրել և շատ զգուշութիւններ է անում։»

ԳԱՆՈՒԱԾՈՒՄՆԵՐ

Collection des Historiens Anciens et Modernes

DE L'ARMENIE

Publié en français sous les auspices de SON EXCELLENCE NUBAR-PACHA et avec le concours des membres de l'Académie arménienne de Saint-Lazare de Venise et des principaux arménistes français et étrangers, par : **Victor Langlois.**

TOME I. 1re PÉRIODE. — Historiens grecs et syriens traduits anciennement en arménien. (MAR APAS CATINA, Histoire ancienne de l'Arménie. BARDESANE. Œuvres historiques et philosophiques. AGATHANGE, Histoire du règne de Tiridate et de la Prédication de S. Grégoire l'Illuminateur, traduction française accompagnée de la version grecque et latine. FAUSTUS DE BYSANCE, Bibliothèque historique. LÉROUBNA D'EDESSE, Histoire d'Abgar et de la Prédication de Thaddée. ZÉNOPE DE GLAG et son continuateur JEAN MAMIGONIAN, Histoire de Daron. FRAGMENTS D'HISTORIENS GRECS PERDUS conservés dans les œuvres des écrivains arméniens).

TOME II. 1re PÉRIODE. — Historiens arméniens du Ve siècle (GORIUN, Biographie de Mesrob. UN AUTEUR ANONYME DU Ve SIÈCLE. Généalogie de la famille de S. Grégoire, illuminateur de l'Arménie, et Vie de S. Nersès. MOÏSE DE KHORÈNE, Histoire d'Arménie. ELISÉE VARTABED, Histoire de Vartan et de la guerre des Arméniens. LAZARE DE PHARBE, Histoire d'Arménie, EZNIG DE GOGHP, Extrait de la Réfutation des Sectes).

Toutes ces traductions sont accompagnées de notes historiques, critiques et philologiques.
Les 2 volumes (franco)..... 32 fr. »
Chaque vol. sép. » ..... 16 fr. 50

S'adresser aux bureaux de l'*Arménia*.

Le Trésor des Chartes d'Arménie

OU CARTULAIRE

De la Chancellerie Royale des Roupéniens, comprenant tous les documents relatifs aux établissements fondés en Cilicie par les ordres de Chevalerie institués pendant les Croisades et par les Républiques marchandes de l'Italie, etc. Recueillis, mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par **Victor Langlois.**

Ce livre se compose de deux parties, savoir :

1° Une introduction historique qui facilite l'intelligence des textes du Cartulaire, et présente sous leur vrai jour, les rapports des Francs avec les Arméniens, à l'époque des Guerres-Saintes, l'organisation féodale de la Cilicie, l'administration intérieure du royaume et d'autres questions curieuses à plus d'un titre, et dont la valeur n'avait point encore été reconnue.

2° Un recueil de tous les privilèges, donations, traités de paix, documents officiels et notariés, émanant de la chancellerie des rois de Sis, etc. Prix 16 francs.

S'adresser aux bureaux de l'*Arménia*.

Հետեւեալ դիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ վճարուած՝ դիրք չերկարիր։

ՀԻՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՁՈՒՀԻ ՄԸ (Մպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿՆՆՈՒԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իբ ազատութիւն ձեռք բերելու համար մէկ գարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սթմ.

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան սխալ հետեւանքների սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՓԱՓԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ պրուբէեցն աւարտեցաւ (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻՔ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Մպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յուշարարի մէջ որ ութ ածալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ինչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ինչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ դիրքերը կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Ալէքսանդր Ծատուրեան, Բանաստեղծութիւններ. Մոսկուա 1891. (Ընտիր Թղթի վրայ մաքուր տպագրութեամբ կը պարունակէ հեղինակին 102 հատ բանաստեղծութիւնները։ Երես 174)։ Գին 1 ֆր. 75 ս.

Հայկակ Էմինեան, Կակղանք, Տետր Ա. Ն. Երզ. 1890 (Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ դրուած)։ 30 սնթմ.

Հ. Կղեմէս վ. Սիպիլեան, Դասագործութիւն Ռուբինեան դպրոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր —, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բազմաթիւ չհրատարակուած նկարներ։ Մեծ 8°. երես Ժ.Զ+88+32). Վիէննա 1892։ Գին 7 ֆրանք։

(Ցանկացողին ձրիապէս կը ղրկուի յառաջաբանն ու ներածութիւնը)։

Die ARMENISCHE KIRCHE in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV. bis zum XIII. Jahrhundert). Von Dr. Arsak Ter-Mikelian. Leipzig. Gustav Fock. 1892. Գին 3 ֆր.

ՐԱՖՖԻ — Վէպիկներ և պատկերներ (Տպուած և անտիպ աշխատութիւններից)։ Հատոր Ա. Գին 7 ֆր.։

ԺՕՐԺ ՍԱՆ — Գարիբալդիի կեանքն ու գործունէութիւնը ,35 սնթմ.։

ԵՐԶՆԿԵՄԱՑ — Ազգային երգարան ձայնագրեալ (Հայկական ձայնանիշերով) 2 ֆր. 80 սնթմ.

Թօսք վասն Հայրենասիրութեան Բ տպագրութիւն 60 սնթմ.։

ՅՈՎՆԱՆԵԱՆ, Մեծն Նարսէս և Հայաստանի վրայ ռուսերաց ազդեցութիւնը 1 ֆր. 10 սնթմ.։

ՊԱՐԳԵՒ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Արմենիայի ներկայ 8րդ տարեշրջանի սկզբէն մինչեւ վերջ (1892 օգոստոս — 1893 յուլիս) կանոնաւորապէս բաժնորդ լինելով իր բաժնորդագրին կանխիկ վճարումներին համար վիճակ պիտի ձգուի և 4 պարգեւ պիտի բաշխուի իրենց։ Անանք որ վեց ամսէ վեց ամիս կամ երեք ամսէ երեք ամիս ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ 8րդ տարեշրջանի բաժնորդագրութիւնը վճարած կը լինին ամբողջապէս, նոյնպէս իրաւունք կունենան այդ պարգեւի վիճակահարին մասնակցելու, իրեւ ամբողջ տարեկանը կանխիկ վճարածներ։ Այդպէս մաս առ մաս ամբողջ տարեկանը վճարողները իրենց վերջին վճարումներէն (1893 փետրվար — 93 յուլիս) կամ վերջին եռամսեայի (1893 մայիս—յուլիս) վճարելնին ստացագրին վրայ տպագրուած թուով կը մասնակցին վիճակահարին։ Անանք որ 8րդ տարեշրջանի տարեկան բաժնորդագինը ամբողջապէս վճարած չեն դեռ վիճակահարը կատարուելիք ժամանակ, բնականապէս կը զրկուին պարգեւին մասնակցելու սակայն իրաւունք որովհետեւ իւրաքանչիւր բաժնորդ պէտք է դիտէ թէ իւր ամբողջ տարեկան կամ տարեկանը լրացնող բաժնորդագրութեան ստացագրի թիւը այն 4 թիւերէ մի՞ն է որոնք վերոյիշեալ պարգեւներէ մին չահած կը լինին։

Զորս պարգեւ պիտի բաշխուի ամբողջ բաժնորդներէն 4ին որոնց որ թիւը երեք վիճակահարին կատարուած առաջին առաջին անգամ քաշուած առին, որ բաժնորդի որ ստացագրի թիւը երեք, նա պիտի ստանայ Արմենիայի խմբագրատունէն 400 ֆրանք. երկրորդ անգամ քաշուած առին, նմած ստացագրի թիւն տէրը պիտի ստանայ 300 ֆրանք. երրորդինը՝ 200 ֆրանգ և չորրորդինը 100 ֆրանգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie Allées de Meilhan, 44.